

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 փետրվարի 2005 թվականի N 226-Ն

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐԿՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԽՈՏԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1922-Ն որոշման N 1 հավելվածի 30-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել ֆիզիկական անձանց պատկանող՝ հարկվող օբյեկտ համարվող տրանսպորտային միջոցների խոտանման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2005 թ. մարտի 10
Երևան

Կ Ա Ր Գ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏ ՀԱՍԱՐԿՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԽՈՏԱՆՄԱՆ

1. Ֆիզիկական անձանց պատկանող՝ հարկվող օբյեկտ համարվող տրանսպորտային միջոցի խոտանումը շահագործման համար ոչ պիտանի տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանություն) պետական ավտոտեսչության վարչության գրանցման-քննական ստորաբաժանումների հաշվառումից հանելն է:

2. Ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող կամ օրենքով սահմանված կարգով լիազորված անձանց տնօրինությանը հանձնված և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական ավտոտեսչության վարչության ստորաբաժանումներում հաշվառման մեջ գտնվող տրանսպորտային միջոցները խոտանելու դեպքում սեփականատերը կամ նրա կողմից լիազորված անձը Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական ավտոտեսչության ստորաբաժանումներ է ներկայացնում՝

- ա) դիմում տրանսպորտային միջոցը խոտանելու մասին,
- բ) տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (լիազորված անձի) անձնագիրը,
- գ) տրանսպորտային միջոցի գրանցման վկայագիրը (տեխնիկական անձնագիրը),
- դ) պետհամարանիշերը,
- ե) հաշվառումից հանելու համար պետական տուրքի գանձման անդորրագիրը:

Ավտոմոբիլի զույգ համարանիշերի, մոտոցիկլի, կցորդի համարանիշերի կորստյան դեպքում տրանսպորտային միջոցը խոտանելու մասին դիմումին կցվում է նաև դրա կորստյան փաստը հավաստող տեղեկանք՝ տրված Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան բաժնի կողմից (ըստ քաղաքացու դիմումի):

Ավտոմոբիլի մեկ համարանիշը կամ գրանցման վկայագրի կորստյան դեպքում դրա մասին նշում է կատարվում տրանսպորտային միջոցը խոտանելու մասին դիմումում: Այդ դեպքում մեկ համարանիշի կամ գրանցման վկայագրի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ խոտանումը մերժելու համար:

3. Խոտանման համար նախատեսված տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի զննում չի կատարվում:

4. Տրանսպորտային միջոցը խոտանվում է դրա մասին դիմումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում: Խոտանված տրանսպորտային միջոցները հաշվառվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական ավտոտեսչության գրանցման-քննական ստորաբաժանումների կողմից:

5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական ավտոտեսչության մարմիններ դիմող՝ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ ցանկության դեպքում նրան հատկացվում է խոտանված տրանսպորտային միջոցի բաղադրիչ մասերի՝ թափքի (ամրաշրջանակի) և (կամ) շարժիչի պատկանելության վերաբերյալ փաստաթուղթ՝ հետագայում դրանք տնօրինելու նպատակով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան